ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակ՝ Փանդունց Աստղիկ

Մանկապարտեզ՝ « Խնձորեսկի ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը նախադպրոցական տարիքի ուսումնադաստիարակչական գործընթացում----------5

1.1 Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական միջոցները----------6

ԳԼՈՒԽ 2. Հայրենաճանաչողությունը որպես սաների արժեհամակարգի ձևավորման միջոց----------11

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Պարապմունքի պլան----------14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------18

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը գլխավոր ուսմունքներից մեկը պետք է լինի, որ պարտավոր է սովորել ամեն մի հայորդի: Ով որ չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն:

Ռաֆֆի

Կյանքն անընդհատ գտնվում է շարժման և զարգացման մեջ և դարի խնդիր է այդ ընթացքի մեջ պահպանել ազգայինը, սերնդից սերունդ փոխանցել մնայուն արժեքները: Այսօրվա երեխաները մեծանում են մի ժամանակաշրջանում,որը էականորեն տարբերվում է իրենց ծնողների ապրած ժամանակներից՝ տարբեր արժեքներ, իդեալներ, կանոններ: Մանկապարտեզն այն վայրն է, որտեղ երեխան մեծերի և հասակակիցների հետ հուզական և գործնական շփման փորձ է ձեռք բերում իր զարգացման համար կյանքի կարևորագույն ոլորտներում: Եվ հենց նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել հստակ կողմնորոշում կյանքի նկատմամբ, նրանց մոտ դաստիարակել բարոյական սկզբունքներ և հարգանք ընտանիքի, մանկապարտեզի, հայրենի հողի, հայրենիքի անցյալի ու ներկայի, սրտացավություն՝ ապագայի նկատմամբ: Նախադպրոցական տարիքը՝ որպես անձի անհատականության ձևավորման ժամանակաշրջանի արդյունավետություն եզակի է: Եվ հարցը միայն նրանում չէ, որ հենց այս տարիքում է հնարավոր առավել արդյունավետ զարգացնել անհատի կարողությունները, այլ նրանում, որ առավել մեծ կամ ուշ տարիքում այդ կարողությունները նվազում են, և այն, ինչ չի իրականացվել նախադպրոցական տարիքում, դպրոցական տարիքում դժվարությամբ է իրականացվում և նույն արդյունավետությունը չի ունենում: Այս տարիքը զարգացման ամենազգայուն ժամանակաշրջանն է երեխայի սոցիալական և բարոյական դաստիարակության հիմքերը դնելու համար: Հայրենասեր անհատ դաստիարակելը պատասխանատու և բարդ խնդիր է, որի լուծումը պետք է տրվի նախադպրոցական տարիքում: Երեխայի մտավոր, հուզական, շարժողական, բարոյական զարգացումը բարոյական և հայրենասիրական դաստիարակության հիմնական միջոցներն են, իսկ հիմնական ձևը՝ աշխատանքը, բարի գործեր կատարելու ցանկությունը և հայրենիքին ծառայելու պատրաստակամությունը:

Կարևորելով, գիտակցելով խնդրի արդիականությունը, թեմայի կարևորությունը, ազգային անվտանգության նկատմամբ սպառնալիքների աճը՝ ես՝ ինքս, նպատակ դրեցի բարձրացնել իմ մասնագիտական կարողությունները և համակարգել գիտելիքները, դրանց շնորհիվ ճիշտ կազմակերպել նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողությունն ու ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը մանկավարժական աղդեցության նպատակաուղղված գործընթաց է, որը միտված է երեխայի մեջ ձևավորելու բարոյական գիտակցություն և վարքագիծ, սեր և հարգանք ընտանիքի, իր ազգային պատկանելիության, հայրենիքի և հասարակության նկատմամբ: Ազգային, հայրենասիրական դաստիարակությունը բովանդակությամբ բազմաբնույթ է և նախադպրոցական տարիքում հնարավոր չէ միանգամից ամբողջական պատկերացում տալ դրա վերաբերյալ: Սերը հայրենիքի նկատմամբ պետք է սկսել երեխային շրջապատող աշխարհից՝ ընտանիք, փողոց, բակ: Ընտանիքի, ընտանեկան ավանդույթների նկատմամբ հարգանքի, սիրո զարգացումը նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության առաջին քայլն է: Հայրենասիրական դաստիարակությունը սկսվում է մոր, հայրիկի, պապիկի, տատիկի, եղբոր, քրոջ նկատմամբ վերաբերմունքից: Երեխան ընտանիքում հայտնաբերում, գտնում է իր հայրենիքը: Ընտանիքը նրա ամենամոտ, ամենահարազատ շրջանակն է, որտեղ նա բացահայտում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են <<սեր>>, <<ներողամտություն>>, <<աշխատանք>>, <<պատասխանատվություն>>, <<հայրենիք>> և այլն:

Նախադպրոցականի ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության նպատակներից են՝

- Դաստիարակել համակողմանի զարգացած անհատներ, հասուն, պատասխանատու մարդիկ, Հայաստանի արժանապատիվ քաղաքացիներ, ովքեր հպարտ են իրենց ազգությամբ:
- Ձևավորել գիտելիքներ իր ազգային պատկանելության, ազգային մտածելակերպի վերաբերյալ:

- Ձևավորել պատկերացումներ ընտանիքի, ընտանեկան հարաբերությունների, ընտանեկան ավանդույթների վերաբերյալ, զարգացնել կապվածություն, սեր և հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների հանդեպ:
- Ձևավորել հայրենասիրության վերաբերյալ հստակ պատկերացումներ, դատողություններ և գնահատականներ:
- Ամրապնդել բարոյական վարքագիծ՝ հոգատարություն, պատասխանատվություն, արդարամտություն, ապրումակցելու կարողություն, ընկերասիրություն, փոխօգնություն:
- Ձևավորել պատկերացումներ, գիտելիքներ ՀՀ մասին:
- Ամրապնդել գիտելիքները պետական խորհրդանիշների՝ դրոշ, զինանշան, օրհներգ, դրանց տեսքի և կառուցվածքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Խորացնել գիտելիքները հայկական բանակի վերաբերյալ, դաստիարակել հարգանք հայրենիքի պաշտպանների, հայ զինվորի, զոհված զինվորների հիշատակի նկատմամբ:[1]

Այս նպատակները վերջնարդյունք են դառնում երեխաների գործունեության բոլոր ոլորտներում՝ առօրյա կյանքում, մանկապարտեզում, խաղերում, աշխատանքի մեջ, ընտանիքում և այլն:

1.1 Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական միջոցները

Ազգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության համակարգն ընդգրկում է կրթական գործունեության բոլոր մակարդակները և իրականացվում է դրանց միջոց-ձևերով.

- շրջակա միջավայր
- ազգային մշակույթ

---

1. ՈՒսումնամեթոդական ուղեցույց, ՀՀ Կապանի համայնքապետարան,Կապան, 2021թ էջ՝

- փոխազդեցություն ծնողների հետ
- թեմատիկ պարապմունքներ
- գեղարվեստական գրականությունը/բանահյուսություն/
- զարգացնող միջավայրի ստեղծում
- խաղային գործունեություն
- փառատոների և նախագծերի կազմակերպում
- աշխատանքային գործունեություն և այլն

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ազգային,ծիսական մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական, հոգեկան, մտավոր հնարավորությունների զարգացմանը: Խաղը հնարավորություն է տալիս երեխաներին իրենց համար առավել հասանելի եղանակով և բարոյական արժեքներով ճանաչել կյանքը, հասարակական երևույթները և այլն: Ազգային , բարոյական և հայրենասիրական թեմաներով դիդակտիկ խաղերը հարուստ պաշար են և հնարավորություն են տալիս երեխաներին զբաղվել տարատեսակ գործունեությամբ՝ մտավոր, շարժողական, հուզական և այլն: Նրանց մղում են ինքնուրույն գործունեության՝ առաջացնելով մտածելու, ապրումակցելու, խաղի խնդրի լուծման համար ինքնուրույն ակտիվ լուծումներ որոնելու, խաղի պայմաններին և հանգամանքներին ենթարկվելու, ընկերների հետ փոխհարաբերվելու կարողություններ: Երեխաների հարաբերությունները խաղի ընթացքում և խաղի նկատմամբ նպաստում են նրանց սոցիալականացմանը:

Ժողովրդական արվեստի տարբեր տեսակի նմուշների կիրառումը նախադպրոցականի հետ աշխատանքում ոչ միայն բարերար ազդեցություն են թողնում երեխաների ազգային դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքում, այլև նկատելիորեն առարկայական և շոշափելի են դարձնում ուսումնական պրոցեսը: Այս ամենը ցանկալի է իրականացնել երեխաների ակտիվ մասնակցությամբ, նրանց բոլոր աշխատանքներին ակտիվ ներգրավվելով, քանի որ երեխայի համակողմանի դաստիարակության գործուն միջոց է աշխատանքային դաստիարակությունը: Երեխաներին առաջարկել պատրաստել ազգային և ծիսական բովանդակությամբ ձեռքի աշխատանքի նմուշներ (խուրջին, քսակ, ազգային տարազ, ազգային տիկնիկ և այլն):

Երեխայի ազգային, բարոյական, հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է ազգային, ժողովրդական բանահյուսության դերը: Այն անսպառ աղբյուր է հայեցի դաստիարակության համար, որի միջոցով երեխայի մեջ դաստիարակվում են ազգային լավագույն հատկանիշները: Հեքիաթներում, ասացվածքներում, հանելուկներում ամփոփված է ժողովրդական իմաստությունը, որը դարեր ի վեր կրթել է մատաղ սերնդին, նրանց մեջ սերմանել հպարտություն իրենց ազգության, երկրի, սեր՝ մայրենի լեզվի, ընտանիքի, իրենց արմատների նկատմամբ: Երեխաները ծանոթանալով հայ բանահյուսությանը կհամոզվեն ժողովրդական խոսքի ճշմարտությանը, իրենց խոսքում կներառեն և կօգտագործեն բանահյուսությունից վերցված փոխաբերական արտահայտություններ, դիպուկ խոսքեր, հաճույքով կգուշակեն հանելուկներ, կարտասանեն, կկատարեն ազգային խաղիկներ, փոքրիկ բանաստեղծություններ և այլն: Նախադպրոցական կրթական գործընթացում առավել օգտագործվող բանահյուսական ժանրերն են՝ առակը, հեքիաթը, հանելուկը, ասացվածքը, առասպելը, ավանդությունը, էպոսը:

Վերոնշյալ ժանրերի ուսուցումը կարելի է կազմակերպել պատմումների, արտահայտիչ ընթերցանության, զրույցներ հեքիաթի, առասպելի շուրջ թատերական գործունեության միջոցներով:

Երաժշտությունը՝ որպես երեխայի դաստիարակության կարևոր և արդյունավետ միջոց, նրանց հաղորդակից է դարձնում ազգային և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնում ազգային նվագարաններին (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն): Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով: Երախաների ծանոթացումը ազգային, ժողովրդական երաժշտությանը կարելի է կազմակերպել տարբեր երաժշտական նախագծերի միջոցով՝ հիմքում դնելով հայկական, ազգային, ծիսական տոները (<<Ամանոր>>, <<Սուրբ ծնունդ>>, <<Զատիկ>>, <<Խաղողօրհնեք>, <<Բարեկենդան>>...): Այս տարիքի երեխաների շրջանում ազգային երաժշտության նկատմամբ հետաքրքրությու և սեր արթնացնելու համար արդյունավետ միջոց է թատերական գործունեության տարբեր ձևերի կիրառումը՝ երգերի, հեքիաթների բեմադրություններ, երաժշտական միջոցառումների

կազմակերպում, տիկնիկային և սեղանային թատրոն և այլն: Ազգային երժշտության, պարերի, խաղերի ուսուցման հետևողական, համակարգված, գրավիչ, կազմակերպված աշխատանքը նպաստում է երեխաների գեղագիտական և մտավոր զարգացմանը, զարգացնում ստեղծագործական հմտություններ, ուսուցանում՝ գիտակցված վերաբերմունք ազգային մշակույթի ընկալման նկատմամբ:

Հայրենասիրական դաստիարակության կարևոր միջոց է երեխաներին ժողովրդի ավանդույթներին ծանոթացնելը: Ծանոթացնելով ավանդույթների՝ մենք դրանով նրանց ծանոթացնում ենք ժողովրդի, ողջ երկրի կյանքին: Սկզբում երեխան ընկալում է առանձին փաստեր, ապա մեծերի օգնությամբ ընդհանրացնում դրանք: Դաստիարակը կարող է ծնողներին խորհուրդ տալ Անկախության օրը, Հայկական բանակի օրը, Եղեռնի օրը կամ ընտանիքի համար մեկ այլ կարևոր օր երեխայի հետ գնալ հուշարձան և ծաղիկներ խոնարհել՝ ի նշան երախտագիտության մեր խաղաղ կյանքի համար զոհվածներին:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Ուստի ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում:[2]

Նախադպրոցականի ազգային, բարոյական, հայրենասիրական մտածողության զարգացմանը նպաստում են հատուկ մշակված պարապմունքները: Պարապմունքների գերխնդիրն է երեխայի մեջ դաստիարակել ազգային մտածելակերպ և արժանապատվություն, բարոյական ճիշտ վարքագիծ և արժեհամակարգ:

---

[2] Հ. Միտոյան և ուրիշ., Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2011թ. էջ 158

Պարապմունքի արդյունավետությունն անմիջականորեն կախված է դաստիարակից, նրա մասնագիտական կարողություններից և հմտություններից, թեմայի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենալուց, անձնային որակներից : Դաստիարակը պետք է հանդես գա << սոցիալական ուղեկցողի>> դերում: Նա պետք է կարողանա ստեղծել բարենպաստ պայմաններ և զարգացնող միջավայր, երեխաների աղգային, բարոյական և հայրենասիրական դաստիարակության համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Հայրենիքը մարդու համար ամենաթանկն ու սուրբն է, առանց որի մարդը դադարում է մարդ լինել:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Հայրենաճանաչողությունն սկիզբ է առնում ընտանիքից, բակից, ազգից, մանկապարտեզից, դպրոցից, գյուղից, քաղաքից և տարածվում է մինչև մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հեռավոր անկյունները: Երեխան ընտանիքից ճանաչում է իր հայրենիքը, այնուհետև նախադպրոցական մանկության շրջանը նպաստում է երեխայի հայրենասիրական զգացմունքների դաստիարակմանը, նրա հայրենաճանաչողությանը, քանի որ հենց այդ ժամանակ է ձևավորվում մշակութային և արժեքային կողմնորոշումները, երեխայի անձի հոգևոր և բարոյական հիմքը, նրա հույզերի, զգացմունքների, մտածողության զարգացումը, սոցիալական մեխանիզմները: Այդ շրջանը բարենպաստ է երեխայի վրա հուզական և հոգեբանական ազդեցության համար, քանի որ իրականության ընկալման պատկերները, մշակութային տարածությունը շատ վառ և ամուր են և հետևաբար մնում են հիշողության մեջ երկար ժամանակ, իսկ երբեմն նաև ամբողջ կյանքում, ինչը շատ կարևոր է հայրենասիրական դաստիարակության գործում: Հայրենասիրության և հայրենաճանաչողության զգացումը սկսվում է հիացմունքից այն բանի նկատմամբ, թե ինչ է տեսնում փոքրիկն իր առջև, ինչով է նա ապշում և ինչն է արձագանք առաջացնում նրա հոգում: Դաստիարակի խնդիրն է երեխայի ստացած տպավորությունների զանգվածից ընտրել իր համար առավել մատչելին՝ բնությունը և կենդանիների աշխարհը, մարդկանց աշխատանքը, ավանդույթները, սոցիալական իրադարձությունները և այլն: Ավելին՝ դրվագները, որոնց վրա գրավում են երեխաների ուշադրությունը, պետք է լինեն վառ, երևակայական, կոնկրետ և հետաքրքրություն առաջացնող: Հայրենասիրության հիմքը, իրավամբ, համարվում է երեխաների նպատակային ծանոթացումը հայրենի հողին: Հայրենիքի հանդեպ սերը սկսվում է սիրուց դեպի փոքր հայրենիքը՝ այն վայրը, որտեղ մարդը ծնվել է: ՈՒստի հայրենի հողի հանդեպ սեր մշակելու գործը սկսելով՝ դաստիարակն ինքը պետք է

լավ իմանա դա: Նա պետք է մտածի, թե ինչն է ավելի նպատակահարմար ցույց տալ և պատմել երեխաներին՝ առանձնացնելով հատկապես տվյալ տարածքի կամ տարածաշրջանի ամենաբնորոշը: Ցանկացած մարզ, քաղաք, թեկուզ փոքր գյուղը յուրահատուկ է: Յուրաքանչյուր վայր ունի իր բնույթը, ավանդույթներն ու ապրելակերպը: Համապատասխան նյութի ընտրությունը թույլ է տալիս նախադպրոցականներին պատկերացում կազմել, թե ինչով է հայտնի տվյալ տարածաշրջանը: Մենք պետք է ցույց տանք երեխային, որ իր երկիրը հայտնի է իր պատմությամբ, ավանդույթներով, տեսարժան վայրերով, հուշարձաններով, լավագույն մարդկանցով: Նախադպրոցական տարիքի երեխան պետք է իմանա իր քաղաքի անունը, իր փողոցը, դրան հարող փողոցները, ինչպես նաև ում պատվին են դրանք անվանակոչվել: Նրանք բացատրում են, որ յուրաքանչյուր մարդ ունի տուն և քաղաք, որտեղ ծնվել և ապրում է: Սա պահանջում է էքսկուրսիաներ, մեծահասակների աշխատանքի դիտարկումներ, որտեղ յուրաքանչյուր երեխա սկսում է գիտակցել , որ աշխատանքը միավորում է մարդկանց, պահանջում է համերաշխություն, փոխադարձ օգնություն և գիտելիքներ: Եվ այստեղ մեծ նշանակություն ունի երեխաների ծանոթությունը տվյալ բնակավայրի հետ: Երեխայի արժեհամակարգի ձևավորման մեջ մեծերի, հատկապես մտերիմ մարդկանց օրինակը մեծ նշանակություն ունի: Ընտանիքի ավագ անդամների (պատերազմի մասնակիցների, նրանց առաջնագծում աշխատանքային սխրանքների) կյանքից կոնկրետ փաստերի հիման վրա անհրաժեշտ է երեխայի մեջ սերմանել այնպիսի կարևոր հասկացություններ, ինչպիսիք են <<պարտքը հայրենիքի հանդեպ>>, <<սեր հայրենիքի հանդեպ>>, <<թշնամու ատելություն>>, <<աշխատանքային սխրանք>> և այլն: Կարևոր է երեխային հասցնել այն ըմբռնմանը, որ մենք հաղթելու ենք, որովհետև սիրում ենք մեր հայրենիքը, հայրենիքը հարգում է իր հերոսներին, ովքեր իրենց կյանքը տվել են մարդկանց երջանկության համար: Նրանց անունները հավերժացել են քաղաքների, փողոցների, հրապարակների անուններով, նրանց պատվին կանգնեցվել են հուշարձաններ:

Հայ ժողովրդի անցած ուղին ազգապահպանության, հավատի, ազատության և անկախության համար մղված հերոսապատում է: Այդ պատմությունը մեր

ինքնությունը պահպանելու, արժանապատիվ ապագա կառուցելու, մեր ձայնն աշխարհում լսելի դարձնելու անվերապահ իրավունք է ընձեռում մեզ, մեր սերունդներին: Մեր բանակը ժողովրդի ծնունդն է, սպաներն ու զինվորները՝ ժողովրդի զավակները: Մեզ է բախտ վիճակված ավարտին հասցնելու նախնյաց գործը: ՈՒստի մենք պարտավոր ենք ոգեկոչել նրանց, մատնանշել անցած սերունդների ռազմական սխրանքները և կրթել գալիք սերունդներին այդ սխրանքներով:[3]

Ի վերջո հայրենիքն էլ պարտավոր է խնամել իր զավակներին, օրհնությամբ ողողել նրանց, դարձնել հեղինակավոր, որ մեզանից յուրաքանչյուրը ցանկանա սիրել նրան: Հայրենասիրության դրսևորումները տարբեր են և երբեմն էլ վարակիչ են դառնում, իսկ երբ երեխաներն են փորձում այն մեզ սովորեցնել, այն է՛լ ավելի գրավիչ է դառնում: Իսկ երեխաներն, այո՛, կարողանում են հայրենասիրություն սովորեցնել: Երբ նախադպրոցականն է խոսում հայրենասիրությունից, այն այնքան մեղմ, անարատ ու մաքուր է հնչում, հայրենիքն ասես նույնպես մանակնում է:

Բոլորս խոսում ենք հայրենասիրությունից և ռազմական ոգուց, բայց ոչ մեկիս աչքերում այդքան խիզախություն և ուժ չենք տեսնի, որքան սահմանին մոտ ապրող փոքրիկ մանչուկների, ովքեր դեռ մանկուց ապրել են այդ դժվարությունները: Հայրենասիրությունը մահճակալի տակ լացող և իրենց ծնողների թիկունքում թաքնված վախկոտների համար չէ, այլ սահմանը շենացնող, քարը ձեռքին ամուր բռնած, զենքի համար ոտքերը գետնին զարկող չորս տարեկան երեխաների համար է, ովքեր ուզում են շուտ մեծանան, որպեսզի գնան սահմանը պահելու: Սահմանամերձ գոտու երեխաների մեծ մասը այն հարցին, թե ինչ են ուզում դառնալ, պատասխանում են՝ զինվոր: Սա փաստում է այն մասին, որ հենց սահմանին ապրող երեխաների մեջ հայրենասիրությունը ներարկվում է մայրական կաթի հետ:

Հայրենիքը սկսվում է սահմանից…

---

[3] Ա. Ներսիսյան, ՆՄԱՆՎԵ՞ՆՔ, ՀՅ Դաշնակցություն, Հայոց բանակը 15

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Խումբ՝ միջին

Պարապմունք՝ Խոսքի զարգացում

Թեմա՝ <<Իմ հայրենիքը>>

Նպատակներ՝

- Ընդլայնել երեխաների իմացական հետաքրքրությունները հայրենիքի մասին:
- Ծանոթացնել ՀՀ պետական խորհրդանիշներին:
- Զարգացնել հարցերին պատասխանելու, կապակցված խոսքը կառուցելու հմտությունները, ամրապնդել հիշողությունը:

Ակնկալվող վերջնարդյունք՝

- Կընդլայնվեն երեխաների իմացական հետաքրքրությունները հայրենիքի մասին:
- Կծանոթանան ՀՀ պետական խորհրդանիշներին:
- Կզարգանա հարցերին պատասխանելու, կապակցված խոսքը կառուցելու հմտությունները, կամրապնդվի հիշողությունը:

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ (բ, գ, զ, ը, թ), Ի (բ,գ,դ)

Կարողունակություն՝ լեզվական և հաղորդակցական, ժողովրդավարական և քաղաքացիական

Անհրաժեշտ պարագաներ՝ ՀՀ դրոշ, զինանշան, անձնագիր, մետաղադրամ, օրհներգի ձայնագրություն, քարտեզ, տեսարժան վայրերի նկարներ:

Ընթացքը

Խթանման փուլ

Մեթոդ՝ <<Մտագրոհ>>

Երեխաներին ուղղորդելու համար հնչեցնել հարցեր.

- Երեխանե՛ր, որտե՞ղ ենք մենք ապրում:

- Ո՞ր մարզում:

- Ո՞ր մանկապարտեզն եք հաճախում:

Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակ - Մենք հայրենիք ենք անվանում այն վայրը, ուր ծնվել, մեծանում ենք, որտեղ մեր ծնողներն են, պապիկներն ու տատիկները: Մեր հայրենիքը Հայաստանի Հանրապետությունն է, մայրաքաղաքը՝ Երևանը, մենք հայ ենք:

Պատմում ՀՀ խորհրդանիշների մասին. զուգահեռ ցուցադրվում են համապատասխան նկարներ:

Դաստիարակ - Յուրաքանչյուր երկիր ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝ դրոշ, զինանշան և օրհներգ:

Միացնել <<Կարմիր, կապույտ, ծիրանագույն>> երգի ձայնագրությունը և միաժամանակ ցուցադրել Հայաստանի դրոշը: Երեխաներին ոգևորելու համար բաժանել դրոշակներ:

Դաստիարակ- Ուրեմն մեր երկրի դրոշի գույներն են՝ կարմիրը, կապույտը և ծիրանագույնը: Այն ամրացված է քաղաքապետարանի, կառավարության շենքերի վրա: Բոլոր հանդիսավոր արարողություններին բարձրացնում են ՀՀ դրոշը, իսկ տոնակատարություններին՝ զարդարում մեր երկիրը: Հայաստանի երկրորդ խորհրդանշանը զինանշանն է, որի վրա պատկերված են արծիվն ու առյուծը, որոնք առանձնանում են իրենց ուժով, խելքով և խորհրդանշում են ուժ, իմաստություն, գեղեցկություն:

Երեխաների մեջ զինանշանի մասին գիտելիքներն ամրապնդելու համար ցուցադրել մետաղադրամներ, ՀՀ անձնագրեր:

Դաստիարակ – Հայաստանի երրորդ խորհրդանշանը օրհներգն է՝ <<Մեր հայրենիքը>>: Այն հատուկ հանդիսավոր երգ է, որը հնչում է հատուկ հանդիսությունների, պետական-պաշտոնական արարողությունների ժամանակ:

Միացնել օրհներգի առաջին մասը և հիշեցնել, որ այն լսելիս պետք է ոտքի կանգնել, լինել լուռ:

Ֆիզկուլտդադար.

Եկե՛ք շարվենք մենք, հավսա՛ր,
Մենք քայլում են միշտ խրոխտ,
Զինվորներ ենք հավասար,
Մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ:

Թող թշնամին վախենա,
Վեր խոյանում արծվի պես,
Քա՛ջ ենք, ուժե՛ղ, անխնա՛,
Դե՛, հիմա դուք տեսե՛ք մեզ:

/Երեխաներն արտասանվող տողերի բովանդակությանը համապատասխան կատարում են վարժություններ, քայլում տեղում և շրջանով/:

Կշռադատման փուլ

Մեթոդ՝ <<Երիցուկ>>

Երեխաներին բաժանել երկու խմբի, խմբերից յուրաքանչյուրին տալ ծաղկանման թերթիկներ, որոնվ վրա պատկերված են դրոշ, զինանշան, քարտեզ, մետաղադրամ, եկեղեցի, իսկ ծաղկի երկու առէջները, որոնց վրա պատկերված են Արարատ լեռն ու Սևանա լիճը ամրացնել պաստառին: Ամբողջացնելով հայրենիքի գաղափարը՝ երեխաներն իրենց պատկերազարդ թերթիկներն ամրացրեցին առէջների շուրջը և ստացան երիցուկ ծաղկի տեսք:

Դիտարկողները դիտարկեցին՝

Տնօրեն

Հայրենաճանաչողության և հայրենասիրության սերմանումը երեխայի մեջ պետք է սկսել մանկապարտեզից: Ազատ ու անկախ հայրենիքի ապագան հայրենասիրական ոգով դաստիարակված երեխայի ձեռքերում է: Պարապմունքի թեման անչափ

կարևոր էր ու խորիմաստ: Երեխաները դաստիարակի հետ մտովի փոքրիկ ճամփորդություն կատարեցին Հայաստանի ողջ տարածքով: Դաստիարակը հմտորեն կարողացավ հասնել պարապմունքի նպատակի վերջնարդյունքին, նախադպրոցական տարիքի երեխաներից յուրաքանչյուրի մեջ հայրենասիրության կայծեր առաջացրեց, նրանց տոգորեց հայրենասիրության վեհ զգացողություններով:Պարապմունքի ողջ ընթացքում երեխաները ակտիվ մասնակցություն ունեցան, նրանք համակ ուշադրությամբ լսում էին դաստիարակին, ոգևորված կատարում վերջինիս հանձնարարությունները:

Դաստիարակ

Դաստիարակի կողմից ընտրված թեման նախադպրոցականի կրթության մեջ շատ կարևոր էր, որովհետև այն միտված էր նախադպրոցական տարիքի երեխաներին ծանոթացնել հայրենիքին և պետական խորհրդանիշներին: Պարապմունքի թեման հետաքրքիր էր և ուսանելի, որի գերխնդիրն էր երեխաների մեջ դաստիարակել հայրենասեր և հայրենատեր սերունդ: Պարապմունքի ընթացքում երեխաները ցուցաբերեցին մեծ ակտիվություն, ոգևորությամբ կատարում էին դաստիարակի հանձնարարությունները, մասնակցում պարապմունքի փուլերին: Ընտրված դիդակտիկ նյութերը համապատասխանում էր թեմային: Դաստիարակը հասավ պարապմունքի ճիշտ վերջնարդյունքին պաստառի տեսքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը բարոյական զգացում է: Հոգեբանները հաստատում են , որ բարոյական հատկությունները չեն կարող առաջանալ բնական <<հասունացման>> միջոցով: Դրանց զարգացումն ու ձևավորումը իրականացվում է աստիճանաբար և կախված է կրթության միջոցներից, մեթոդներից և այն պայմաններից, որտեղ ապրում է երեխան: Նախադպրոցական տարիքը կարելի է անվանել ամենօրյա բացահայտումների շրջան: Ընդլայնելով երեխաների իմացածի հորիզոնները՝ նրանց սրտում պետք է սերմանել սիրո կայծ հայրենի հողի, հայրենիքի նկատմամբ: Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի քան բոլորը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով սաների հայրենաճանաչողության ձևավորման առանձնահատկությունները՝ եկա այն եզրահանգման, որ հայրենասեր չես կարող ծնել, կարող ես դաստիարակել: Յուրաքանչյուրս պետք է ռազմահայրենասիրության ամուր հիմքեր դնենք մատաղ սերնդի մեջ, կրթենք նրանց, որպես իսկական հայ, որպես հայոց պետականության ամրապնդման և հարատև խաղաղության հաստատման մարտիկների: Երեխաները մեր ապագան են, իսկ լավ ապագայի համար պարտավոր ենք ստեղծել բոլոր անհրաժեշտ հնարավորություններն ու միջոցները, որպեսզի մեր երեխաներն ապրեն խաղաղ երկնքի հովանու ներքո, ունենան անհոգ ու երջանիկ մանկություն, հզոր ապագա:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ.Ա. Սուխոմլինսկի, <<Ինչպես դաստիարակել իսկական մարդ>>, Երևան, 1980թ.
2. Ա. Յա. Վետոխինա, <<Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակությունը>>, Սանկտ Պետերբուրգ, Մանկական մամուլ, 2009թ.
3. ՈՒսումնամեթոդական ուղեցույց, ՀՀ Կապանի համայնքապետարան, Կապան, 2021թ.
4. Հ. Միտոյան և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Կրթ. ազգ. ինստ., Երևան, 2011թ.
5. Աշոտ Ներսիսյան, ՆՄԱՆՎԵ՛ՆՔ, ՀՅ Դաշնակցություն, Հայոց բանակը 15
6. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում, Կրթ. ազգ. ինստ., Երևան, 2013թ.